Նարինե Նուշերվանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Բանալի բառեր: գաղթավայր, Սփյուռք, Հայոց ցեղասպանություն, հայության տեղաշարժեր, ժողովրդագրական կացություն, ձուլում, հայրենիք, համայնք:

XIX դ. իրավիճակը հայկական գաղթավայրերում անկումնային էր. մի կողմից կայանում էին փոքրաթիվ հայկական համայնքային միավորներ (Ֆրանսիա, ԱՄՆ, Արելյան Եվրոպա), իսկ մյուս կողմից երբեմնի եռուն կյանք ունեցող հայ գաղթավայրերը սկսում էին խամրել, ինչպես նաև մարում էր ազատագրական մտքի այն բոցավառումը, որով նշանավորվեցին Հայոց պատմության XVII-XVIII դարերը: Հրաժեշտ տալով հայրենիքը ազատագրելու գաղափարին՝ գաղթաշխարհի հայությունը սկսում է պայքարել զուտ սեփական բեկորների պահպանության համար: Թեև հստակորեն հաշվարկված չէ հայության քանակը հիմնական հայկական գաղթավայրերում, սակայն որոշ տվյալների հիման վրա կարող ենք նշել՝ XIX դ. վերջի և XX դ. սկզբի որոշ քանակական տվյալներ:

Հյուսիսային Կովկասում 18-րդ դ. առաջացած հայկական գաղթավայրերի կողքին 19-րդ դ. սկսած ձևավորվեցին նորերը (Արմավիրում, Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Գրոզնիում, Ստավրոպոլում և այլն): Առաջին աշխարհամարտի նախօրեին Հյուսիսային Կովկասում բնակվող հայերի թիվը հասել էր 70.754-ի[1]:

XVIIIդ. սկսած հյուծվել և թուլացել էր ավանդաբար հզոր Աստրախանի գաղթավայրը: Նախկինում այն ուներ զգալի ինքնավարություն՝ ինքնուրույն դատական համակարգով: Սակայն այժմ իշխանությունները այն զրկել էին թե՛ ինքնավարությունից, թե՛ դատական գործերը վարելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է թվաքանակին, ապա այն հաշվվում էր 5-7.000 հայ: Ռուսահայ մյուս նշանավոր գաղթավայրը ղրիմահայ գաղթավայրն էր: 16-րդ դարում այն հայտնի էր որպես ծովային Հայաստան՝ մեծաքանակ հայության առկայության պատճառով: Մահմեդական լուծը, ինչպես նաև տեղի ունեցող անընդհատ պատերազմները հյուծել էին այդ նշանավոր գաղթավայրը: 19-րդ դ. վերջին տեղի հայության թվաքանակը չէր անցնում 9.000-ը[2]: Ամբողջ Ղրիմի թերակղզու հայ բնակչության թիվը 1844 թ. եղել է 4.500[3], 1863 թ.՝ 4.106 հայ, 1896 թ.՝ 8.667 հայ՝ հետզհետե նվազելով հասնում է 8.249-ի[4]: Գործում էին մոտ 10-ը հայկական դպրոցներ՝ ընդամենը 1500 աշակերտներով[5]:

Նույն վիճակն էր տիրում Արևելյան Եվրոպայի գաղթավայրերում: Մ. Բժշկյանը, որը 1808 թվականին եղել է Բուլղարիայում, շրջել է հայկական գաղթօջախներում: Եթե նրա հիշած հայկական տների թիվը մոտ 200 էր, ապա ողջ Բուլղարիայում 19-րդ դ. սկզբներում պետք է գտնվելիս լիներ մոտ 10.000 հայ բնակչություն, այս վիճակագրությանը ավելանում է նաև գյուղերի փոքրաթիվ հայ բնակչությունը[6]:

Բուլղարիայի հայ բնակչության վիճակը հիմնովին փոխվեց 1878 թ., երբ բուլղարական ժողովուրդը, ռուս ժողովրդի գործնական աջակցությամբ դեն նետեց թուրքական լուծը և քաղաքական անկախություն ձեռք բերեց: Այժմ ոչ միայն բարելավվեց բուլղարահայերի վիճակը, ոչ միայն վերացան հալածանքները, այլև

---

[1] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., 2001, էջ 115:
[2] Տե՛ս «Հայերն աշխարհում», հանրագիտական համառոտ բառարան, Ե., 1995, էջ 107:
[3] «Բազմավեպ», 1844, էջ 174:
[4] «Մուրճ», 1903, № 6, էջ 108:
[5] Նույն տեղում:
[6] Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, Բ, Ե., 1967, էջ 115-116:

Բուլղարիան դարձավ հուսալի մի հենարան Թուրքիայում հալածվող հայ բնակչության համար, ուր և ծանր օրերին ուղղվեցին հայ գաղթականական հոսանքները[1]:

XIX դ. վերջին քառորդում գրեթե ամեն տարի բնակչություն է եկել Բուլղարիա Թուրքիայից, սակայն զանգվածային առաջին խոշոր գաղթականությունը եկել է 1895-1896 թվականներին՝ համիդյան ջարդերից հետո: 1895-1896 թվականներին Թուրքիայից Բուլղարիա եկած հայ գաղթականության ստույգ թիվը դժվար է ասել. մոտավոր հաշիվներով, համիդյան ջարդերից հետո Բուլղարիա գաղթած հայ բնակչության թիվը պետք է եղած լինի շուրջ 5.000-6.000[2] :

Բավական մեծ է եղել 1912-1913 թվականներին՝ երկրորդ Բալկանյան պատերազմի տարիներին, Թուրքիայից Բուլղարիա եկած հայ գաղթականությունը: Եթե 1910 թ. Բուլղարիայում գտնվել է շուրջ 13 000 հայ բնակչություն ապա Բալկանյան պատերազմից հետո հայ բնակչության թիվը բարձրացել է 35.000-ի: Այս թվի մեջ հաշվի է առնված նաև Դոբրուջի մարզի հայ բնակչությունը, որը բալկանյան երկրորդ պատերազմից հետո միացվեց Բուլղարիային[3]: Բուլղարիայի այցելու հովիվ Գնել եպիսկոպոսի 1914 թվականի մայիսի 8-ին էջմիածին ուղարկած զեկուցագրից երևում է, որ հայ բնակչություն է եղել Դոբրուջի՝ մարզի Սելեստրի քաղաքում, նրա հարևան գյուղերում, Դոբրուջում և Պալչեկում: Ըստ բուլղարական պաշտոնական տվյալների՝ Բուլղարիայում ապրող հայերի բնակչության թիվը տարբեր ժամանակներում հետևյալն է եղել. 1885 թ.՝ 5.252,, 1893 թ.՝ 6.643, 1900 թ.՝ 13.809, 1905 թ.՝ 12.932[4]:

Մինչև XIX դ. քառասնական թվականները դժվարին էր Մոլդավիայի հայոց վիճակը: Ռումինահայ գաղթավայրում հայերի թվաքանակի մասին առկա են տարբեր տվյալներ՝ Հ. Աճառյանը ներկայացնում է 1885 թ. «Արմենիա» թերթի հաղորդած տվյալները՝ 4.000 հոգի՝ միաժամանակ հղելով է. Պալասանյանին, ով նույն թվականին հայության քանակը հասցնում է 16.000-ի: Ըստ 1899 թ. վիճակագրության Ռումինիայում կար 6.598 հայ և 500-700 կաթոլիկ[5]: Մինաս Բժշկյանը, որը 1808 թ. շրջագայել է Վալախիայում և Մոլդավիայում, ընդհանուր տեղեկություններ է հաղորդել՝ Բուխարեստ՝ 120 տուն, Ֆոկշան՝ 60 տուն, Յաշ՝ 150 տուն, Տեկուչ՝ 200 անձ, Ռոման՝ 110 տուն, Պոտոշան՝ 400 տուն, Օկնա՝ 60 տուն, Գալաց՝ 50 տուն[6]: Ռումինիայի հայ բնակչություն 19-րդ դարի կեսերից սկսած աճում է Բուլղարիայից և Թուրքիայի տարբեր մասերից եկած գաղթականությամբ: Պրոֆ. Սիրունու հաշվումներով, դարի կեսերին ողջ Ռումինիայում եղել է 21.000 հայ բնակչություն[7]: Ռումինիայի հայ բնակչության վիճակագրությունը 1894 թ. կազմել է Պ. Ք. Մամիկոնյանը: Նրա տվյալներով Ռումինիայում եղել է մոտ 1.700 տուն հայ բնակչություն[8]:

Արևելյան Եվրոպայի մյուս՝ հունգարահայ գաղթավայրի ամենից ծաղկուն շրջանը եղել է XVIII դարը: XVIII դ. վերջում ներկայիս Ռումինիայի տարածքում գտնված երկրամասերից ամենից շատ հայ ապրելիս է եղել Տրանսիլվանիայում: Ըստ Բժկյանի վիճակագրության, XIX դ. սկզբում Տրանսիլվանիայի 4 գաղթօջախներում ապրող հայերի թիվը եղել է Եղիսաբեթուպոլսում՝ 2.100 շունչ, Կեռլայում՝ 3.600, Սինդ Միգլոշում՝ 700, Սիբվիզում՝ 214: Ամբողջ Տրանսիլվանիայում XIX դ. սկզբում ապրել է մոտավորապես 10.000 շունչ հայություն[9]: 1848-1849 թվականներին Հունգարիայի հեղափոխության պարտությունից հետո և ձուլման պատճառներով հունգարահայ գաղթավայրն իրապես խամրեց:

---

[1] Տե՛ս «Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Ե., 2011, էջ 50:
[2] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 119:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 120:
[4] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 676:
[5] Նույն տեղում, էջ 163:
[6] Տե՛ս Բժշկյան Մ., Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 206-209:
[7] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ, , էջ 134:
[8] Տե՛ս Մամիկոնյան Պ., Ռումինահայ ներկան և ապագան, Գալաց, 1895, էջ 117-174:
[9] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ, Ե., 1967, էջ 356-357:

Ամբողջ արևելաեվրոպական տարածաշրջանում անչափ մեծացել էին հայության ձուլման տեմպերը, գոյություն չունեին հայկական դպրոցներ: Հայկական մյուս նշանավոր Լեհաստանի գաղթավայրում 1820 թ. Մ. Բժշկյանը շրջած ժամանակ հայ բնակչության է հանդիպել հետևյալ վայրերում. Լվովում՝ 100 տուն, Ստանիսլավում՝ 70 տուն, Լիսցայում՝ 60 տուն, Բերժանում՝ 60 տուն, Դիսմինիցում՝ 42 տուն, Սենյադինում՝ 70 տուն, Հռոդենքայում՝ 100 տուն, Գութներում՝ 20 տուն: Ռուսաստանի սահմանների մեջ մտած լեհահայ նախկին գաղթօջախներում նա հայ բնակչություն է հիշում Ձվանչիայում՝ 100 տուն, Կամենեյում՝ 70 տուն, Մայլովում՝ 60 տուն, Գրիգորիպոլիսում՝ 350 տուն[1]: Ֆրանսիացի հայագետ Ժակ Մորգանը գտնում է որ Լեհաստանում ապրելիս է եղել շուրջ 200.000 հայություն: Նույն կարծիքին է նաև Կ. Բասմաջյանը[2]: Երբ կաթոլիկության բռնի հարկադրանքի հետևանքով լեհահայերի որոշ մասը դեռ չէր տեղափոխվել հարևան երկրներ, Լեհաստանում ապրելիս է եղել ոչ ավելի քան 15.000 ընտանիք, մոտ 70.000 հայ բնակչություն: Պետք է նկատի ունենալ նաև, որ որոշ թվով գաղթականներ հեռացել են 1671-1672 թթ.՝ լեհ-թուրքական պատերազմի ժամանակ: Այնպես որ XVII դ. Լեհաստանում ասիմիլյացիայի ենթարկված հայերի թիվը ավելի չի կարող լինել 50.000-ից[3]: Արդյունքում XIX դ. վերջին լեհահայ գաղութը մեզ է ներկայանում գրեթե լիովին ձուլված վիճակում:

XIX դ. քառասնական թվականներից սկսում է հայ երիտասարդների հոսքը դեպի Արևմտյան Եվրոպա բարձրագույն կրթություն ստանալու համար: Շվեյցարիայում, Ավստրիայում, Բելգիայում, Բրիտանիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում սովորելու է գալիս գլխավորապես արևմտահայ երիտասարդությունը՝ ստվարանալով և նպաստելով նոր համայնքների ձևավորմանը: Դեռևս 1885 թ. Լայպցիգում հիմնվել է Գերմանիայի տարածքում առաջին Հայ ուսանողների միությունը[4]: 1898 թ. ուսանողական միության վիճակագրությամբ Փարիզում հաշվվում է 130 ուսանող, Մոնպելիեում՝ 10 և Նանսիում՝ 9 ուսանող[5]: 1897 թ. Բեռլինում հաստատված հայ ուսանողները բացեցին «Եվրոպայի հայ ուսանողական միությունը», որ Գերմանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և Ավտրիայի[6] մեջ ցրված բոլոր հայ ուսանողների ներկայացուցիչներով կազմեց առաջին համագումար ժողովը Հայդելբերգում նույն թվականի ապրիլի 12-15-ը[7], իսկ 1907 թ. Բելգիայում առանձին կազմվել է «Հայ ուսանողական միություն»: Հայ ուսանողություն Շվեյցարիայում եղել է ավելի շուտ, քան Գերմանիայում: 1900 թվականին Շվեյցարիայում սովորող հայ ուսանողների թիվը հասել է 51-ի: Համաշխարհային առաջին պատերազմից առաջ հայկական գաղթօջախ է եղել Ժնևում: Հայ բնակչության թիվն այնտեղ հաշվել են մոտ 200 հոգի: 1920 թ. Ժնևի գաղթօջախն սկսվել է կազմալուծվել՝ հայ բնակչության մի մասի հեռանալու հետևանքով[8]: Մեծ Բրիտանիայում ևս առաջին հայ համայնքները ստեղծվել են 19-րդ դարի 30-ական թվականներին Մանչեսթերում: Արդեն 1858 թ. այստեղ գործել է հայկական 15 առևտրական ընկերություն, որոնց թիվը 1895 թվականին հասել է շուրջ 50-ի: Համայնքն սկսել է ձևավորվել 1860-ական թվականներին[9]:

---

[1] Բշկեան Մ., նշվ. աշխ., էջ 91-175:
[2] Տե՛ս Բասմաջյան Կ., Իսկական պատմությիւն հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 409:
[3] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ, էջ 227:
[4] Տե՛ս Մակիչյան Վ., Գերմանիայի հայկական համայնքի կազմավորումը և զարգացումը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2016, էջ 305:
[5] Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., 2002, էջ 724:
[6] XIX դարի վերջին քառորդում Վիեննայի հայ բնակչության թիվը զգալիորեն ավելացել է: Ա. Ալթունյանի ուղեգրությունից երևում է, որ 1876 թ., իր Վիեննա այցելած ժամանակ, այնտեղ են եկել և բնակություն են հաստատել հայեր տարբեր վայրերից՝ 20-25 ընտանիք եկած է եղել Հունգարիայից, 15 ընտանիք՝ Լեհաստանից, 30 ընտանիք՝ Մոլդավիայից և Թուրքիայից, 15 ընտանիք՝ Ռուսաստանից և այլն, Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ, Ե., էջ 178): 19-րդ դարի սկզբներին Վիեննայի հայ գաղութն այնքան մարդաշատ է եղել, որ Մխիթարյան աբբահայրերը հայ երեխաների համար բացել են գիշերօթիկ դպրոց, հիմնել տպարան, լույս ընծայել դասագրքեր: Վիեննահայերն ունեցել են իրենց ամսագրերը, որոնցից «Հանդես ամսօրյան» (հիմնադրվել է 1887 թվականին) լույս է տեսնում ցայսօր:
[7] Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 740:
[8] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ, Ե., էջ 199:
[9] Մեծ Բրիտանիայի հայ համայնք, http://hayernaysor.am/archives/24084 , 25.03.2017 :

Կարևոր է ամերիկահայության պարագան: 1820-1880 թվականներին հայության թիվը այստեղ 300-ից չի անցել[1]: 1880-ական թվականներին Ամերիկա գաղթող հայերի թիվը բավական մեծ չափերի է հասնում. այս գաղթականները գալիս էին մեծ մասամբ Խարբերդից, որը բողոքականության կենտրոնն էր դարձել Հայաստանում: Այստեղ էին հաստատվում նաև հայ արհեստավորներն ու աշխատավորները: 1880-ական թվականների վերջից արդեն 1.500 հայ ունեցող ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ հայ հեղափոխական կուսակցության գործիչների համար[2]: Արդյունքում 1880-90-ական թվականներին ձևավորվել են ամերիկահայ գաղթավայրերի գրեթե մեծ մասը: Ն. Լ. Մանկունու հաշվումներով, մինչև զանգվածային գաղթը, Ամերիկայում 1890 թ. եղել է 2.000 հոգի[3]: Հասարակական-քաղաքական առումով այն ամենակայացած գաղթավայրն էր, որտեղ գործունեություն էին ծավալում բարեգործական, մշակութային, արհեստակցական, երիտասարդական և այլ 10-նյակ կազմակերպություններ: 19-րդ դ. 90-ական թվականներից հայ բնակչությունը սկսում է վերջնականապես հաստատվել Կալիֆորնիայի նահանգում: Հայ գաղթականությանն այս նահանգը բերողը հիմնականում հողն է հանդիսացել[4]:

Հայկական ամենակայացած մյուս գաղթավայրերը Մերձավոր Արևելքում են: Եգիպտոսի հայկական գաղթավայրը, չնայած համեմատաբար փոքրաքանակ էր, ամենատարբեր տվյալներով 5-7.000 հայ[5], խիստ ամուր դիրք ուներ երկրում: Ներկայացուցիչները մեծամեծ պաշտոններ էին զբաղեցրել երկրում, և հատկապես Նուբարյան տոհմը, որի ներկայացուցիչները վարչապետ և ԱԳՆ նախարարներ էին:

Ըստ Պոլսի պատրիարքարանի 1888 թ. կազմած վիճակագրության, իրաքահայ բնակչության թիվն այնքան է պակասել, որ բոլոր գաղթօջախների բնակչությունը միասին վերցրած հաշվում է 150 տուն, ընդամենը՝ 1.121 հոգի[6]: Ըստ Կուվինենի, 19-րդ դարի վերջերին Իրաքի հայ գաղթավայրի բնակչության թիվը հետևյալն պատկերն է ունեցել. Բաղդադում՝ 3.300 հոգի, Բաստայում՝ 1.525, Մուսուլում՝ 230 հոգի[7]: Մինչև համաշխարհային առաջին պատերազմը Իրաքի հայ բնակչության թիվը չի անցել 1.000-ը: 1915 թ. առաջ Բաղդադում գտնվել է 70 ընտանիք, Բասրայում՝ 35:

Դեռևս 18-րդ դարում Լիբանան էին տեղափոխվել 10-նյակ հազարավոր հայեր՝ հիմնականում հաստատվելով Բեյրութում և շրջանի մեկ տասնյակ գյուղեր հիմնելով: 19-րդ դ. 2-րդ կեսին նրանց շրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում կաթոլիկ միսիոներները, որի հետևանքով լիբանանահայության մեծ մասը բռնեց ձուլման ճանապարհը, նույնիսկ ինքնությունը կորցրած, բայց նրանց գյուղերը մինչև Ցեղասպանությունը պահպանում էին իրենց անվանումները՝ Ագարակ, Ավերակ և այլն: Բավական է ասել, որ 1847-1860 թվականներին Բեյրութում, որը հետագայում դարձավ հայկական ամենախոշոր գաղթօջախը Մերձավոր արևելքում, եղել է ընդամենը 60 տուն հայ բնակչություն[8]: Հետագայում հայ բնակչության թիվը փոքր-ինչ ավելացել է: 1891 թ. այստեղ բնակություն է հաստատել 600 շունչ հայ: Սուր քաղաքում հիշվում է 530 հայ, նրա մոտիկ վայրերում՝ 201 հոգի[9]: 1895 թ. ջարդերից հետո Կեսարիայից, Ադանայից, Սսից, Մարաշից, Այնթափից, Ուրֆայից, Տիգրանակերտից և ուրիշ վայրերից Բեյրութ և Լիբանանի մյուս քաղաքներն են գալիս բազմաթիվ հայ գաղթականներ: Բացի այդ 1896 թ. ջարդերից հետո Բեյրութ են տեղափոխում Մարաշի և Զեյթունի որբերին[10]: Մինչև

---

[1] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ., էջ 347:
[2] Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ, Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 18:
[3] Տե՛ս Մանկունի Ն., Ամերիկահայ գաղութի պատմությունից, «ՊԲՀ», 1962, № 1, էջ 103:
[4] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ., էջ 351:
[5] 1907 թ. Եգիպտական կառավարության կատարած վիճակագրության համաձայն, այնտեղ ապրելիս է եղել 7747 շունչ հայ բնակչություն: Այս մարդահամարի տվյալները, պետք է ասել, որ թերի են, հաշվառման մեջ են մտել միայն այն հայերը, որոնք իրենց եգիպտական քաղաքացիներ են համարել: Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., Բ., էջ 69:
[6] «Սուրիահայ տարեցույց», 1925, էջ 111-112:
[7] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 47:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 19:
[10] Տե՛ս նույն տեղում, նշվ. աշխ., էջ 19:

պատերազմը ամբողջ Սիրիայում և Լիբանանում հաշվվել է ընդամենը 17-18.000 հայ բնակչություն[1]:

Մոտ 100.000 էր հաշվվում հայության թիվը Իրանում: Այստեղ առկա է հայության 3 հիմնական մեծ կենտրոն՝ Նոր Ջուղա, Թավրիզ, Թեհրան: 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին Իրանում հայերը օժտված էին մեծ հեղինակությամբ և բազմաթիվ իրավունքներով: Երբ 1908 թ. սկսած իրանահությունը դրսից եկած հայդուկների գլխավորությամբ աջակցեց Իրանի սահմանադրական հաղթանակին, հայության դերակատարությունը երկրում կրկնապատկվեց:

Ի մի բերելով ներկայացվածը՝ կարող ենք ասել, որ Ցեղասպանության նախօրեին աշխարհի շուրջ 300.000 գաղութահայեր ցրված էին շուրջ 30 գաղթավայրերում: Միանշանակ տեսնում ենք, որ նշված ժամանակահատվածում հայկական գաղթօջախներում մեծացել են ձուլման տեմպերը, և համայնքները մեզ են ներկայանում բոլորովին նոսրացած: Ներքին տեղաշարժերի արդյունքում հայերը շարժվում են դեպի նոր ու անծանոթ եվրոպական և ամերիկյան երկրներ՝ ձևավորելով միանգամայն նոր գաղթավայրեր, ինչպես Շվեդիայի, Ավստրիայի, Դաշնային Գերմանիայի և հատկապես Ավստրալիայի հայկական նոր համայնքները: Միայն այդ տեղաշարժերի դանդաղեցման և ժողովրդագրական կացության կայունացման շրջանում Հայկական գաղթավայրերը ձեռք բերեցին համեմատաբար հստակ ուրվագիծ, երբ արդեն Հայոց ցեղասպանությունից հետո սկսվում է Հայկական սփյուռքի ձևավորման գործընթացը:

Нарине Нушерванян, Общее представление о поселениях армянских беженцев в конце XIX-начале XX веков, - Армения, занимая стратегически важное геополитическое положение, на протяжении всей своей истории являлась центром столкновения интересов мощных государств разных эпох, в результате чего армяне стали эмигрировать. Вследствие этого во многих странах мира сформировались армянские общины. В данной статье представлена общая картина армянских поселений до Геноцида армян, что дает возможность лучше увидеть, как рассредоточивались армяне в мире, и выявить их внутренние передвижения. Именно в результате сокращения эмиграционных потоков и этнографического состояния в период стабилизации армянские поселения приобретали сравнительно четкие очертания.

Ключевые слова: поселения армянских беженцев, диаспора, Геноцид армян, миграция армян, демографическая ситуация, ассимиляция, родина, армянская община.

Narine Nushervanyan, The panorama of the Armenian communities at the end of the 19th century and at the beginning of the 20th century, - Because of its important geopolitical position Armenia has always been an arena of clashes of powerful states throughout its history. This became the reason for the emigration of the Armenian people and resulted in the formation of the Armenian communities in different countries. In the article we touched upon the overall image of the Armenian communities before the Armenian Genocide, which gives an opportunity to clearly see the distribution of Armenians and internal movements, as only during the slowdown of these movements and stabilization of the demographic situation Armenian communities acquire a relatively clear outline.

Key words: refugee settlement, Diaspora, The Armenian genocide, moves of Armenians, demographic situation, alligation, homeland, community.

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 20: